ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«08» հոկտեմբերի 2018 թվականի N: 189 ք.Գյումրի

ԽԱՉԻԿ ԷԼԲԱԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Խաչիկ Էլբակյանի 2018 թվականի հոկտեմբերի 4-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աղինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Խաչիկ Էլբակյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 25 աշխատանքային օր՝ 2018 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 13-ը ներառյալ:
2. Խաչիկ Էլբակյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աղինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Մարինե Պետրոսյանին:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է